

պնդասիրտն եւ հնարագէտ Պարոնն Հայոց, հանգոյն իմն նախնի ազգակցացն մամիկոնեան Վահանեանց՝ մտաբերեաց սակաւութեամբ իւրայոցն առաւել փշեցուցանել զթշնամիսն՝ քան եթէ անձեռնհաս յոլովութեամբ գնդից. եւ ըստ ոչ ուրուք կարծեաց՝ յանակնկալ տեղուջէ՝ *երեսնհիւք* լոկ արամբք ՚ի վեր երեւեալ, եւ ուղղակի գրոհ տուեալ ՚ի կողմն ճամբարին՝ ուր Ռոստոմն կայր անկասկած, իբրեւ շանթ կայծական ՚ի քթթել ական բաղխեցաւ եհար տապաստ արկ զխրոխտացեալ գլխաւորն այն. եւ որպէս յուսայրն՝ աղմկեալ զբովանդակ խուժան անկարգ բանակին՝ խառնիխուռն խուճապեցոյց ՚ի փախուստ, եւ զհետ մտեալ՝ կոտորէր եւ հալածէր մինչեւ ՚ի կողմանս Սարաւանայ քարաբերդին՝ յափունս Ջահանայ, որ թերեւս սահմանամէջ էր յայնժամ ընդ բաժին երկրի իւրոյ եւ ընդ Անտիոքայն: Այնքան զարմանալի եւ գերմարդկային իմն համարեցաւ գործս այս, մինչեւ համբաւել՝ մարտակիցս Լեւոնի եղեալ երկուց սրբոց Ջօրավարացն՝ Գէորգեայ եւ Թէոդորոսի, մարմնաւոր տեսեամբ իջելոց ՚ի բարձանց բերդին Ստոյ. թերեւս զի եկեղեցիք կամ սեղանք էին նուիրեալք յանուն Սրբոցս այսոցիկ ՚ի բերդին անդ պանծալոյ: Եթէ ո՛րքան մեծ էր պաշտօն Սրբոցս հօգօրաց եւ առ հօր նախնիս մեր, եւ առ սիրողս նոցին եւ յայժմուս, վկայեսցէ եւ չքնաղագիւտ կապարեայ կնիքս այս մերոյս Ա. Թորոսի, թոռին մեծին Ռուբինի, որ զերկոցուն եւս պատկերս ունի զուգակիցս ՚ի միում դիմի, ՚ի միւսումն՝ զրէ յունարէն, յանձնեալ զինքն ՚ի պաշտպանութիւն երկոցուն *քաջայաղթ վկայիցն, Թէոդորոս Սեբաստոս Ռուբինեան*: Վիպասանն Վահրամ զմի ՚ի Սրբոցն միայն յիշէ զօրավիզն ՚ի Լեւոնեան պատերազմիս.

«Քանզի Ռոստոմն էր սատակեալ,
Ի Գէորգէ սրբոյ խոցեալ»¹²:

¹² Մարտակցութիւն Սրբոյս ոչ միայն առ քրիստոնեայս, այլ եւ առ այլադէնսն երեւի հռչակեալ. որպէս եւ ՚ի նմին տարւոջ՝ յաւուրս պայագատութեան Լեւոնի՝ ՚ի հռչակաւոր եւ յաղիտալի պատերազմին Նազարէթի, յորում հինգ հարիւր ասպետք կորովիք՝ անհնարին քաջութեամբ կռուեալ կոտորեցան ՚ի գնդէ եօթն հազար հեծելոց Աֆտալայ՝ որդւոյ Սալահէտտինի, յորժամ յետինն միայն մնայր տակաւին կենդանի՝ հիացեալք այլազգեացն ընդ բազմապատիկ գործս քաջութեանն, զնա ինքն համարեցան Ս. Գէորգ, եւ աղերսէին մի՛ տալ զանձն ՚ի մահ. եւ իբրեւ ա՛յլ եւս նախճիրս գործեալ՝ անկաւ նա, բարձեալ որպէս զնոյն Սուրբ Ջօրավար՝ բաժանէին զհանդերձս նորա, եւ զանդամս իսկ, ՚ի պահպանութիւն անձանց իւրեանց: Նորին Սրբոյ յիշատակ է առ նոսա *Խորեղէզն*, որ ՚ի 22 կամ 23 ապրիլի, յորում աւուր հաստատեալ է տօն նորին առ քրիստոնեայս: